«Լայն իմաստով» տարածաշրջանը ներառում է նաև Թուրքիան, Իրանը և Ռուսաստանը: Այս երեք դերակատարների համար դա կարևոր է առաջին հերթին 21-րդ դարում սեփական ազգային շահերի ապահովման և տնտեսական ու ռազմաքաղաքական ազդեցության ընդլայնման տեսանկյունից: Հարկ է նաև նշել, որ տարածաշրջանը, առնվազն դրա մի զգալի մասը, ընկալվում է որպես սեփական ազդեցության գոտու անբաժանելի մաս, քանի որ մինչև 20-րդ դարի սկիզբը գտնվում էր նշված պետությունների փոփոխվող ինքնիշխանության ներքո: Այսինքն՝ Իրանը և, հատկապես, Ռուսաստանը պատմամշակութային և պատմաքաղաքական կապ ունեն այս տարածաշրջանի հետ: Այսօրվա Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի Հանրապետությունների տարածքները, ինչպես նաև Վրաստանի մեծ մասը պատկանում էին Պարսկական կայսրությանը

1 Տե՛ս ՄԱԿ-ի զեկույցը Հայաստանի վերաբերյալ՝ <https://population.un.org/wpp/Graphs/Probabilistic/POP/TOT/51>; ՄԱԿ-ի զեկույցը Ադրբեջանի վերաբերյալ՝ <https://population.un.org/wpp/Graphs/Probabilistic/POP/TOT/31>; ՄԱԿ-ի զեկույցը Վրաստանի վերաբերյալ՝ <https://population.un.org/wpp/Graphs/Probabilistic/POP/TOT/268> (հարցվել է 22.5.2023):

և ամենաուշը 19-րդ դ. սկզբին անցան Ռուսական կայսրությանը ռուս-պարսկական մի քանի պատերազմների արդյունքում:²

2020 թ. պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակն ամբողջովին հասկանալու համար նպատակահարմար է գոնե համառոտ կանգ առնել այստեղ նախապես գոյություն ունեցող անվտանգային իրավիճակի վրա՝ ուշադրության կենտրոնում պահելով Հայաստանն և Արցախը:

2. Իրավիճակը տարածաշրջանում 2020 թ. պատերազմից առաջ

Լեռնային Ղարաբաղի հակամարտության ներկա փուլը սկսվել է 1988 թ.: Հայաստանի անկախացման պահին՝ 1991 թ., Լեռնային Ղարաբաղը, ունենալով ընդամենը 150.000 բնակչություն և լինելով չորս կողմից շրջապատված, փորձեց պաշտպանվել Ադրբեջանից, որն այն ժամանակ ուներ ավելի քան 6 միլիոն բնակչություն: Հայաստանում գիտակցում էին Լեռնային Ղարաբաղի բնակչության արտաքսման և բնաջնջման սուր սպառնալիքը, ուստի որոշում կայացվեց մասնակցել պաշտպանական գործողություններին նախ կամավորական խմբերով, իսկ հետագայում՝ կանոնավոր զորքերի միջամտությամբ:

Հայկական կողմի հաջողված ռազմական գործողությունների արդյունքում 1994 թ. մայիսի սկզբին Ադրբեջանի ղեկավարությունը Ռուսաստանի միջնորդությամբ ստիպված եղավ անժամկետ զինադադար կնքել Հայաստանի և Արցախի հետ, ինչը տարածաշրջանում 1991 թ. իրավիճակից տարբերվող էապես նոր անվտանգային իրավիճակ ստեղծեց: Մինչ պատերազմի սկիզբը հայ-ադրբեջանական սահմանի երկարությունը կազմում էր մոտ 566 կմ (չհաշված Նախիջևանի հետ ունեցած 221 կմ երկարության սահմանը): Զինադադարից հետո այն զգալիորեն կրճատվել էր, քանի որ հայ-ղարաբաղյան սահմանը ձգվում էր Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքից մինչև հայ-իրանական սահման, և նշված հատվածի ներսում ՀՀ զորքեր այլևս չկային: Հայկական կողմը չպետք է անհանգստանար նշված տարածքում իրենց արևելյան սահմանի անվտանգության համար: Պաշտոնական Երևանն Արցախի պաշտպանության բանակի հետ մեկտեղ կառուցեց իր անվտանգության համակարգը՝ Ադրբեջանի և Արցախի միջև արևելյան սահմանի կամ շփման գծի երկայնքով: Այսինքն՝ շուրջ 30.000 կմ² (Հայաստան) և մոտ 12.000 կմ² (Արցախ) տարածքներում սկսեց գործել Հայաստանի անվտանգության միասնական համակարգ, որտեղ ներքին և

2 Հմմտ. Andreas Rüesch, Die Schande von Gulistan [Գուլիստանի անոթը], in: Neue Zürcher Zeitung (24.10.2013), <https://www.nzz.ch/die-schande-von-gulistan-ld.827036> (հարցվել է 22.5.2023): Ռուսական և Պարսկական կայսրությունների միջև կնքված 1813 թ. Գյուլիստանի խաղաղությունը և 1828 թ. Թուրքմենչայի պայմանագիրը էական նշանակություն ունեն պատմական և իրավական տեսակետներից:

արտաքին անվտանգության համար պատասխանատու մարմինները սերտորեն համագործակցում էին միմյանց հետ:

Երևանի և Ստեփանակերտի միջև սկսեց գործել նաև ներդաշնակցված տնտեսական և արժույթային միասնական համակարգ: Այսպիսով՝ Արցախի իշխանությունների վերահսկողության տակ գտնվող տարածքը, ըստ էության, բաց էր հայգործարարների, ներդրումների համար և այլն: Արտաքին քաղաքականության առումով Հայաստանի կառավարությունը ներկայացնում էր Արցախի շահերը, իսկ Լեռնային Ղարաբաղում տեղակայված զորքերով՝ Երևանը փաստորեն տեղի բնակչության անվտանգության հիմնական երաշխավորն էր:

3. Հետպատերազմյան անվտանգության իրավիճակը 2020 թ. հետո

3.1 2020 թ. պատերազմի արդյունքներն ու նորաստեղծ իրավական, քաղաքական և անվտանգային-ռազմական իրավիճակը

2020 թ. սեպտեմբերի 27-ին Բաքվի կողմից սկսված լայնածավալ հարձակմամբ ադրբեջանական զինուժը հարավարևելյան հատվածում կարողացավ ճեղքել շփման գիծը և մի քանի շաբաթվա ընթացքում հասնել ՀՀ միջազգայնորեն ճանաչված սահման: Ավելի ուշ, երբ նոյեմբերի սկզբին ադրբեջանական բանակը գրավեց Շուշի քաղաքը, և Ստեփանակերտի պաշտպանությունը հայտնվեց իրական սպառնալիքի տակ, ռուսական կողմի դիվանագիտական ինտենսիվ քայլերի շնորհիվ 2020 թ. նոյեմբերի 9-ին զինադադարի վերաբերյալ համաձայնագրով,³ դադարեցվեցին ռազմական գործողությունները: Տվյալ համաձայնագրով հայկական կողմը պետք է Ադրբեջանին զիջեր ավելի շատ տարածքներ, քան վերջինս կարողացել էր ռազմական գործողությունների միջոցով 44 օրվա ընթացքում գրավել: Արդյունքում Արցախը կորցրեց նաև Հայաստանի հետ ուղիղ ցամաքային կապը:

Արցախն այնքան տարածքներ կորցրեց, որ ենթակառուցվածքների և սեփական տնտեսական համակարգի բնականոն հետագա զարգացումը, ինչպես նաև պատշաճ էներգամատակարարման և պարենային անվտանգության ապահովումը դժվար թե հնարավոր լինի: Հայաստանյան ստորաբաժանումների ամբողջական դուրսբերման և սեփական ռեսուրսների բացակայության պատճառով Արցախն ի վիճակի չէ համարել բնակչության անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ պաշտպանական ստորաբաժանումները: Ոչնչացված կամ կորցրած

3 Տե՛ս Ադրբեջանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ռուսաստանի Դաշնության նախագահի 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության տեքստը <http://en.kremlin.ru/events/president/news/64384> (հարցվել է 22.5.2023):

զինտեխնիկան տեսանելի ապագայում հնարավոր չէ նորից ձեռք բերել հաշվի առնելով երկրի տնտեսական վիճակն ու իրավական կարգավիճակը: Ամփոփելով պետք է ասել, որ Արցախն այլևս ի վիճակի չէ համապատասխան կերպ կազմակերպել սեփական անվտանգությունը:

Ուստի, ըստ 2020 թ. նոյեմբերի 9-ի համաձայնագրի, ռուսական խաղաղապահ առաքելությունը, որը տարածաշրջանում պաշտոնապես համարված է 1960 զինճառայողներով, լիազորված է 5 տարի ժամկետով գործել ադրբեջանական իշխանությունների կողմից չվերահսկվող Արցախի տարածքում՝ այնտեղ բնակվող հայ ազգաբնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով: Այդ եռակողմ հայտարարությունից ի վեր՝ Հայաստանի և Արցախի միջև միակ ֆիզիկական կապը հանդիսանում է այսպես կոչված «Լաչինի միջանցքը», որը գտնվում է ռուսական խաղաղապահ ուժերի վերահսկողության ներքո:

3.2 «Խաղաղության դարաշրջան». Հայաստանի Հանրապետության նոր ռազմավարությունն ու ներքաղաքական իրավիճակը, իբրև ազգային անվտանգության բաց

Հայաստանի ներկայիս (այսինքն 2022 թ. ամռան) բանակցային կարողության բացակայությունը պայմանավորված է ոչ միայն 2020 թ. պատերազմում կրած ռազմական պարտությամբ, այլև ներքաղաքական իրավիճակով: 43 օր շարունակ Հայաստանի կառավարությունն ամեն օր համոզիչ կերպով հաղորդում էր հակառակորդի կրած մեծ կորուստների և հայկական պաշտպանության ուժերի անկասկած հաղթանակի մասին: Իսկ պատերազմի 44-րդ օրը հայ հասարակությունը բախվեց դաժան իրականությանը. Արցախի զգալի մասը, այդ թվում՝ խորհրդանշական նշանակություն ունեցող Շուշին, ընկան, և հայ զինվորականները ստիպված եղան հեռանալ զգալի տարածքներից: Մեկ-երկու օր հետո հայերը տեղեկացան իրենց բանակում զոհված զինվորների ահեղ թվերի մասին:

Այս ամենը հանգեցրեց հասարակության մեջ չափազանց խորը անվստահության իշխանությունների և պետական ղեկավարության նկատմամբ: Չնայած դրան, սկզբնական շրջանում քաղաքականապես կաթվածահար եղած ղեկավարությունն աստիճանաբար վերականգնեց կառավարման իր կարողությունը և երկրի քաղաքական կյանքի նկատմամբ վերահսկողությունը: Իշխանություններն ընտրեցին ռիսկային, բայց ճիշտ մարտավարություն՝ նրանք նախընտրեցին արտահերթ խորհրդարանական ընտրությունները 2021 թ. ամռանը ու դրանով իսկ լեգիտիմացրին իշխանությունը հետպատերազմյան ծանր իրավիճակի համար: Անդրադառնալով ներքաղաքական թեմային՝ իշխանություններին հաջողվեց խորհրդարան բերել հիմնական ընդդիմադիր ուժերին, որոնք 2020 թ. նոյեմբերի 9-ից փողոցներում ցույցեր էին անում՝ բողոքելով ինտենսիվ զինված հակամարտությունների ավարտի դեմ, և պոտենցիալ վտանգ էին ներկայացնում իշխանության համար՝ դրանով իսկ սպառնալով փողոցից գրավել իշխանությունը: Բացի այդ, Հայաստանի ղեկավարությանը հաջողվեց համոզել արտաքին

քաղաքականության միջազգային գործընկերներին, որ անգամ ռազմական պարտությունից հետո նրանք իրավասու են խոսել հայ ժողովրդի անունից և անհրաժեշտության դեպքում զնայ «ցավալի զիջումների»:

Ինչպես նշվեց, 2021 թ. ընտրությունները կայունացրին Հայաստանի քաղաքական ղեկավարության դիրքերը, սակայն մինչ այժմ չեն կարողացել նպաստել իշխող և ընդդիմադիր ուժերի միջև ներքաղաքական երկխոսության ձևավորմանը: Հայաստանում հասարակությունը մնում է պառակտված: Այն, որ ո՛չ իշխանությունը, ո՛չ ընդդիմությունը չեն կարողանում հանրությանը բացատրել, թե ինչպես են մտադիր ապահովել Հայաստանի ու Արցախի անվտանգությունն ու հետագա զարգացումը, բացասաբար է անդրադառնում երկրի անվտանգության համակարգի վրա: Բացի այդ, պարտությունից հետո հայ հասարակությունն ունի հոգեբանական խնդիր, որը խանգարում է նրան լիովին հասկանալ իրականությունը և համաձայնեցնել ՀՀ զարգացման հետագա քայլերը:

Ցավալի իրականությունն այն է, որ 2020 թ. զինված հակամարտությունների ավարտից հետո ՀՀ-ն այլևս Արցախի անվտանգության երաշխավորը չէ: Ավելին, Հայաստանի կառավարությունն անտեսում է սեփական ռազմական դոկտրինը, որը մշակվել է 2007-2015 թթ. և վերջին անգամ փոփոխվել է 2020 թ. հուլիսին ուղեուպաշտոնապես ուժի մեջ է, ինչպես նաև ազգային անվտանգության ռազմավարությունը՝ առանց նորը մշակելու: Փոխարենը երկրի քաղաքական ղեկավարությունը խոսում է այսպես կոչված «խաղաղության դարաշրջանի» օրակարգի մասին: Այն կարելի էր լսել 2021 թ. նախընտրական ծրագրում, բայց դա հստակ ձևակերպված փաստաթուղթ չէ, որը հաստատվել է խորհրդարանի կողմից: Այդուհանդերձ, միջազգային գործընկերների հետ բանակցությունների համատեքստում Հայաստանի կառավարության և խորհրդարանի ներկայացուցիչների հրապարակված հայտարարություններից, մամուլի ասուլիսներից և ելույթներից ի հայտ են գալիս երկու նշանակալից կետեր.

1. Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչում և Բաքվի հետ խաղաղության պայմանագրի կնքում: Իրավական տեսանկյունից այս քայլը մշտապես կխոչընդոտի պաշտոնական Երևանի ավելի քան 30 տարվա ջանքերին՝ աջակցելու Արցախի միջազգային ճանաչմանը: Երևանը կարծես թե հաշտվել է այս փաստի հետ: Հայաստանի ղեկավարության կարծիքով՝ Արցախի կարգավիճակի հարցում Հայաստանի նշաձողը պետք է մի փոքր իջեցնել:⁴ Այսինքն Արցախին ադրբեջանական պետականությունից դուրս կարգավիճակ տալու գրեթե բոլոր հնարավորությունները սպառվել են:
2. Առանց նախապայմանների թուրքիայի հետ հարաբերությունների բարելավում կամ վերականգնում: Իրականում դժվար է պատկերացնել, որ թուրքիան, որը նույնիսկ ՄԱՏՕ-ի նիստերին մասնակցելիս իր համաձայնությունը ընդհանուր որոշումներին տալիս է միայն նախապայմաններով, Հայաստանի հետ առանց

4 ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի 2021 թ. ապրիլի 13-ին ՀՀ Ազգային ժողովում ունեցած ելույթից՝ <https://www.primeminister.am/en/statements-and-messages/item/2022/04/13/Nikol-Pashinyan-Speech/> (հարցվել է 22.5.2023):

նախապայմանների որևէ փաստաթուղթ կարող է ստորագրել: 2009 թ. ստորագրված արձանագրությունների վավերացման ճանապարհին խոչընդոտող ամենաարդիական նախապայմանը հիմնականում իրականացվել է. հայկական զորքերն այլևս Արցախում չեն, և Լեռնային Ղարաբաղի հականարտությունն ադրբեջանական տեսանկյունից հանգուցալուծված է:⁵ Թուրքիան կարող է աստիճանաբար հասնել մնացած պահանջներին՝ Հայաստանի⁶ հետ երկկողմ բանակցությունների միջոցով: Թուրքիայի կողմից շտապելու կարիք չկա, քանի որ նրա ներկայիս բնականոն զարգացումը քիչ կապ ունի Հայաստանի հետ փաստաթղթեր ստորագրելուն կամ չստորագրելուն:

«Խաղաղության դարաշրջանի»⁷ օրակարգի անբաժանելի մասն է կազմում նաև տարածաշրջանի տրանսպորտային ուղիների շրջափակման վերացումը,⁸ որն իր հերթին ամրագրված է 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ: Գործնականում խոսվում է ասֆալտապատ ճանապարհների և երկաթուղային գծերի բացման մասին, որոնք կարող են Ադրբեջանին Հայաստանի հարավային տարածքով կապել Թուրքիայի հետ:

Կապող ճանապարհները, որոնց Ադրբեջանն անվանում է «միջանցք», իմ կարծիքով, մեծ հաշվով Հայաստանին, բացի վնասից, ոչինչ չեն տա: Եթե նույնիսկ մաքսատուրքերի կամ վճարների տեսքով թուրքական կամ ադրբեջանական բեռնափոխադրող ընկերություններից գումարներ մտնեն Հայաստանի պետական բյուջե, դա չի փոխհատուցի Հայաստանի ազգային անվտանգությունը սպառնացող վտանգը: Ժամանակի ընթացքում այս ճանապարհի առկայությունը կհանգեցնի Հայաստանի նոսր բնակեցված տարածքներում թուրքալեզու բնակչության ավելացմանը, ինչը հիմնական նախապայմանն է Հայոց Ցեղասպանության համար պատասխանատու և մինչ օրս այս իրողությունը ժխտող Թուրքիայի, ինչպես նաև Ադրբեջանի կողմից հայկական պետականության հետագա օկուպացիայի և ոչնչացման համար:

5 Տե՛ս այս առումով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի բազմաթիվ հայտարարություններից մեկը, 2021 թ. հուլիսի 14-ին՝ <https://ria.ru/20210625/aliev-1738612289.html> (հարցվել է 22.5.2023):

6 Երկու կառավարությունների բանազնացների առաջին հանդիպումը տեղի է ունեցել 2022 թ. հունվարի 14-ին՝ https://www.mfa.am/am/press-releases/2022/01/14/meeting_armenia_turkey/11267 (հարցվել է 22.5.2023):

7 ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի 2021 թ. օգոստոսի 24-ին ՀՀ Ազգային ժողովում ունեցած ելույթից՝ <https://www.primeminister.am/en/statements-and-messages/item/2021/08/24/Nikol-Pashinyan-Speech/> (հարցվել է 22.5.2023):

8 Հմմտ. 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության իններորդ կետը՝ ի. վ.:

4. Արտաքին դերակատարների դերն ու դիրքորոշումը

4.1 Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումն ու դերը

Հաղորդակցության ուղիների բացումը, ըստ երևույթին, բխում է մի շարք արտաքին դերակատարների, այդ թվում՝ ԱՄՆ-ի և Եվրամիության, ինչպես նաև Հայաստանի ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի շահերից:

Ռուսաստանի համար առանցքային նշանակություն կունենա երկաթուղային կապի բացումը, որով ռուսաստանյան Հյուսիսային Կովկասից ապրանքներ կարող են փոխադրվել Կասպից ծովի երկայնքով, այսինքն՝ ադրբեջանական կենտրոնական տարածքներով և ապա Արաքս գետի հովտով՝ Հայաստանի, այնուհետ Սախիջևանի վրայով դեպի Թուրքիա և հակառակը: Բացի այդ, Ադրբեջանի տարածքով ռուսական ապրանքների ներմուծումը Հայաստան, կբարձրացնի Մոսկվայի ջանքերի արդյունավետությունը՝ Երևանն ու Բաքուն սեփական հովանու ներքո մերձեցնելու տեսանկյունից:

Քաղաքական առումով Ռուսաստանին, անշուշտ, ձեռնտու է այդ փաստը: Սակայն ոչ միայն այն բանի համար, որ Հայաստանի տարածքով անցնող նշված ճանապարհները վերահսկվելու են ռուս սահմանապահների կողմից,⁹ այլ նաև այն պատճառով, որ դա էապես կնվազեցնի Վրաստանի որպես Ադրբեջանի և Թուրքիայի (ՆԱՏՕ-ի անդամ) միջև կապող երկրի նշանակությունը: Այս իրողությունը ձեռնտու է նաև Պարսկաստանին, քանի որ Իրանի Իսլամական Հանրապետությունն ավելի քան 30 տարի հանդիսանում է Ադրբեջանի կենտրոնական տարածքների և Սախիջևանի էքսկլավի միջև կապող միակ երկիրն ու ինչպես և Վրաստանը, շահում է տնտեսապես և ամրապնդում իր ռազմաքաղաքական դերը տարածաշրջանում:

Հարկ է նշել, որ 1992-ից Ռուսաստանը պայմանագրով պարտավորվել է երաշխավորել Հայաստանի արտաքին անվտանգությունն ու պաշտպանել պետական սահմանները,¹⁰ ի մասնավորի, նախկին Խորհրդային Միության պետական սահմանները Թուրքիայի հետ: Իսկ Երևանը պետք է հոգա Վրաստանի և Ադրբեջանի հետ իր սահմանների պաշտպանության համար: Բայց, քանի որ Հայաստանը 2020 թ. ավարտից ի վեր չի կարողանում լիովին ապահովել Ադրբեջանի հետ իր սահմանների անվտանգությունը, Ռուսաստանը լրացուցիչ ռազմական դիրքեր է տեղակայել նշված սահմանագծի երկայնքով:

Բացի այդ, 2020 թ. նոյեմբերի 9-ի վերոնշյալ պայմանագրով Ռուսաստանը երաշխավորում է նաև Արցախի հայ բնակչության անվտանգությունը: Սակայն, եթե Հայաստանը ժամանակին, այսինքն մինչև հակամարտության վերջին

9 Հմմտ. նույնը:

10 Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) միջև ՀՀ տարածքում տեղակայված ՌԴ սահմանապահ զորքերի կարգավիճակի և դրանց գործունեության պայմանների մասին պայմանագիրը, որը ստորագրվել է Երևանում 1992 թ. սեպտեմբերի 30-ին: Հրապարակված է ՌԴ ԱԳՅ կայքում՝ https://www.mid.ru/ru/foreign_policy/international_contracts/international_contracts/2_contract/48807/ (հարցվել է 22.5.2023):

կարգավորումները, ինքն էր երաշխավորում Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության անվտանգությունն ու դրա ներքո հասկանում նաև Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիակատար ճանաչումը, սպա Ռուսաստանն այս տարածաշրջանում՝ Արցախում, ներկայումս միայն երաշխավորում է հայ բնակչության գոյության անվտանգությունը: Պաշտոնական Մոսկվայի քաղաքական օրակարգում Արցախի միջազգային ճանաչման հարցը չկա:

4.2 Արևմտյան պետությունների դիրքորոշումն ու հանձնառությունը

Հայաստանի համար խնդրահարույց է թվում նաև այն հանգամանքը, որ 2020 թ. պատերազմի արդյունքները մեծ հաշվով աշխարհաքաղաքական տեսանկյունից ձեռնտու են նաև Արևմուտքին, բացի Արցախում ռուսական զորքերի առկայությունից:

Դա հստակ ցույց է տալիս Բեռլինից հետևյալ օրինակը. Լեռնային Ղարաբաղում երկարաժամկետ խաղաղությունն աջակցելու խորագրով 2020 թ. նոյեմբերի 26-ին Գերմանիայի Բունդեսթագի ընթացիկ նիստի շրջանակներում կազմակերպված լսումների ընթացքում այդ ժամանակ իշխող ԲԴՄ/ԲՍՄ (CDU/CSU) խմբակցության անդամներից մեկն իր ելույթում նշեց հետևյալը. «Այն, ինչը չհաջողվեց ձեռք բերել 27 տարիների ընթացքում միջազգային բանակցային ջանքերի միջոցով, մասամբ ձեռք բերվեց վեց շաբաթվա ընթացքում»:¹¹

Հայաստանի տարածքով Թուրքիայի և Ադրբեջանի միջև ցամաքային կապի ստեղծումը բխում է նաև Արևմուտքի աշխարհաքաղաքական շահերից, քանի որ ՆԱՏՕ-ի անդամ երկիր Թուրքիան կունենա ուղիղ ցամաքային ելք դեպի, տարածաշրջանում Ռուսաստանի միակ ռազմավարական դաշնակից, Հայաստանի տարածք, ինչը նաև թույլ կտա ՆԱՏՕ-ին էլ ավելի ամրապնդել իր դիրքերը Հարավային Ասիայում, ինչն իր հերթին կհակադրվի թե՛ Ռուսաստանի, թե՛ Իրանի շահերին:

Այս համատեքստում Մոսկվայի և Արևմուտքի միջև մրցավազք է սկսվում Երևանն ու Բաքուն միավորելու համար, որտեղ Արևմուտքը տնտեսական տեսակետից կարող է շատ ավելի արդյունավետ գործընկեր լինել Երևանի համար, քան Ռուսաստանը, ինչը լավ, բայց ոչ սպառիչ փաստարկ է տարածաշրջանում ռուսական ազդեցության շոշափելի նվազմանը հասնելու համար: Արևմուտքը պետք է ապացուցի Հայաստանին, որ իրեն այլևս պետք չէ Ռուսաստանը, քանի որ արտաքին սպառնալիք չկա: Դրա հիմնական նախապայմանները կլինեին Երևանի և Բաքվի միջև խաղաղության պայմանագիրը, որում Ղարաբաղի հարցը լիովին լուծված է, և հայ-թուրքական հարաբերությունների լիարժեք կարգավորումը:

11 ԲԴՄ/ԲՍՄ խմբակցության անդամ Նիկոլաս Լոբելի (Nikolas Löbel) ելույթից: օրակարգի 13 ա կետի քննարկման թեմա՝ «Լեռնային Ղարաբաղում երկարաժամկետ խաղաղության լուծման մշակման աջակցություն»: Բունդեսթագի տպագիր փաստաթուղթ համար 19/24646, Գերմանիայի Բունդեսթագի 2020 թ. նոյեմբերի 26-ի 195-րդ նստաշրջանի համառոտ զեկույց: Միստի արձանագրություն հմր. 19/195՝ <https://dsserver.bundestag.de/btp/19/19195.pdf#P.24652> (հարցվել է 22.5.2023):

2020 թ. նոյեմբերի 9-ի համաձայնագիրը Ռուսաստանին նույնպես պետք է, բայց հետևյալ նրբերանգով, այն է՝ Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունների կարգավորումը կապ չպետք է ունենա Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հետ: Այս իրավիճակում իրադարձությունների պարտադրումը կամ Երևանի ու Անկարայի և կամ էլ Երևանի ու Բաքվի միջև հարաբերությունների դե-յուրե կարգավորումը չեն համապատասխանում ռուսական շահերին, քանի որ Մոսկվան մտադիր է հետագայում ևս հզորացնել իր ռազմական ներկայությունը Հարավային Կովկասում:

Միևնույն ժամանակ, վերը նշված զարգացումները կարող են որոշ առումով խոչընդոտել Արևմուտքի շահերին, քանի որ Հայաստանի տարածքով միացնող ճանապարհները կարող են նվազեցնել Վրաստանի տարածաշրջանային նշանակությունը: Իսկ տնտեսապես և քաղաքականապես թույլ Վրաստանը տեսանելի ապագայում կարող է զրհ գնալ Ռուսաստանին և Թուրքիային: Այս ծրագրերի իրականացմանը կարող է ծառայել նաև 3+3 համագործակցության ձևաչափ ստեղծելու Թուրքիայի առաջարկը (Վրաստան, Ադրբեջան, Հայաստան և Թուրքիա, Իրան, Ռուսաստան): Թեև սա պաշտոնապես ընդունվել է նշված բոլոր դերակատարների կողմից, այն մնում է դեռ կասեցված:

Տարածաշրջանում արևմտյան տերությունների՝ առաջին հերթին Հայաստանում ԱՄՆ-ի, ինչպես նաև առհասարակ տարածաշրջանում Իսրայելի գործունեությունը, Իրանը կարող է ընկալել՝ որպես իր գոյության սպառնալիք: Այս փաստը կստիպի Թեհրանին շարունակել զգուշավոր, սակայն միաժամանակ ակտիվ քաղաքականություն վարել տարածաշրջանում՝ մշտապես հաշվի առնելով Մոսկվայի և Անկարայի շահերը: Եթե դա բավականաչափ չօգնի Իրանին շտկել իրավիճակն իր օգտին, ապա չի բացառվում որ նա կարող է վատագույն դեպքում անգամ ռազմական քայլեր ձեռնարկի:

5. Ամփոփ եզրակացություն

Քանի որ Հայաստանը միջազգայնորեն չէր ճանաչել Արցախը, նա չկարողացավ օկուպացված դասակարգել նաև հայաբնակ տարածքները, որոնք Ադրբեջանը նվաճել էր 2020 թ. պատերազմի արդյունքում: Այժմ արտակարգ, այն է՝ իրական վտանգի առաջացման պարագայում Արցախում պաշտոնապես 1960 հոգանոց ռուսական զորախումբը դժվար թե կարողանա պաշտպանել չճանաչված երկիրը: Հայաստանի Հանրապետության արևելյան և հարավարևմտյան սահմանները, թերի կամ մասամբ, ամբողջովին անպաշտպան են: Հայաստանը ոչ մարդկային, ոչ էլ զինտեխնիկայի առումով ի վիճակի չէ արդյունավետ պաշտպանվել թուրքական ակտիվ աջակցությամբ ուղեկցվող ադրբեջանական ազրեսիայից:

Վերոնշյալից երևում է, որ Հայաստանի և Արցախի, այսինքն՝ հայ ազգի համար ստեղծվել է աննախադեպ ծանր իրավիճակ: Չկա դաշնակից կամ գործընկեր, որը պատրաստ է օգնել Հայաստանին՝ իրական հայկական ազգային շահերից բխող ծրագրեր իրականացնելու հարցում: Հրապարակային բոլոր առաջարկները, որոնք Երևանը 2020 թ. նոյեմբերի 9-ից ի վեր ստանում է Մոսկվայից և Արևմուտքից, լավագույն դեպքում ներկայացնում են ժամանակավոր լուծումներ և չեն բխում հայկական ազգային շահերից: Դրանից բացի, վերոնշյալից երևում է, որ ինչպես Մոսկվայի, այնպես էլ հավաքական Արևմուտքի ներկայացված առաջարկները, իրավիճակային են: Եթե ինչ որ տեղ տվյալ առաջարկը ելնում է այն ներկայացնող կողմի շահերից, ապա միաժամանակ կարող է հակադրվել հենց այդ նույն (առաջարկը ներկայացրած) կողմի շահերին: Նշված իրավիճակը կարող է փոխվել միայն 2022 թ. փետրվարի 24-ից Ուկրաինայում սկսված զարգացումների ավարտից հետո:

Մինչ այդ հայկական կողմի համար խնդրահարույց է թվում այն հանգամանքը, որ ստեղծված իրավիճակն օգտագործելու են Բաքուն և Անկարան՝ սեփական շահերը հնարավորինս առաջ տանելու նպատակով: Պատմական այս փուլում հայկական ազգային շահերից է ելնում պաշտոնական Երևանի մաքսիմալ զգոնությունը և բանակցությունների ընթացքում գրավոր վերջնական պայմանավորվածություններից դիվանագիտական խուսափումը, այլ կերպ ասած՝ ժամանակի ձգումը:

Այս իրադրությունը մոտենում է գրեթե համազգային աղետի: Հայ հասարակության բոլոր հատվածները, այդ թվում՝ ընդդիմադիր ուժերը, պետք է միասնական լինեն և գերինտենսիվ գործեն արտաքին քաղաքական բոլոր գործընկերների հետ՝ գտնելու լուծում, թեկուզ ժամանակավոր, որը կպահպանի սեփական ինքնիշխանությունն ու կերաշխավորի հանրային անվտանգությունը՝ միջազգային իրավունքով ճանաչված ՀՀ և Արցախի հայաբնակ տարածքներում:

Միևնույն ժամանակ Երևանից պահանջվելու է ներպետական ռեսուրսների մոբիլիզացիա, քանզի Բաքուն և Անկարան կարող են փորձել իրենց շահերն առաջ տանել նաև ռազմական ուժի միջոցով, ինչպես դա արվեց 2020 թ. աշնանը:

Գրականություն

МИНИСТЕРСТВО ИНОСТРАННЫХ ДЕЛ РФ, ДОГОВОР МЕЖДУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИЕЙ И РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ О СТАТУСЕ ПОГРАНИЧНЫХ ВОЙСК РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ, НАХОДЯЩИХСЯ НА ТЕРРИТОРИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ, И УСЛОВИЯХ ИХ ФУНКЦИОНИРОВАНИЯ, 1992, տես՝ https://www.mid.ru/ru/foreign_policy/international_contracts/international_contracts/2_contract/48807/ (հարցվել է 19.9.2023):

Deutscher Bundestag, Stenografischer Bericht 195. Sitzung, 2020, տես՝ <https://dserver.bundestag.de/btp/19/19195.pdf#P.24652> (հարցվել է 19.9.2023):

Löbel, Nikolas (CDU/CSU) im Rahmen der Diskussion zur Tagesordnungspunkte 13 a: Beratung des Antrags der Fraktionen der CDU/CSU und SPD »Unterstützung der Entwicklung einer langfristigen Friedenslösung in Berg-Karabach« Drucksache 19/24646. Stenografischer Bericht der 195. Sitzung des Deutschen

- Bundestags vom 26. November 2020. Protokoll 19/195, տես՝ <https://dserver.bundestag.de/btp/19/19195.pdf#P.24652> (հարցվել է 19.9.2023):
- Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, The meeting of Special Representatives of Armenia and Turkey took place, 2022, տես՝ https://www.mfa.am/en/press-releases/2022/01/14/meeting_armenia_turkey/11267 ((հարցվել է 19.9.2023):
- President of Russia, Statement by President of the Republic of Azerbaijan, Prime Minister of the Republic of Armenia and President of the Russian Federation, 2020, տես՝ <http://en.kremlin.ru/events/president/news/64384> (հարցվել է 19.9.2023):
- Rüesch, Andreas, Die Schande von Gulistan, 2013, տես՝ <https://www.nzz.ch/die-schande-von-gulistan-ld.827036> (հարցվել է 19.9.2023):
- The Prime Minister of the Republic of Armenia, Prime Minister Nikol Pashinyan's speech at the National Assembly during the discussion of the performance report of the Government Action Plan for 2021, 2022, տես՝ <https://www.primeminister.am/en/statements-and-messages/item/2022/04/13/Nikol-Pashinyan-Speech/> (հարցվել է 19.9.2023):
- The Prime Minister of the Republic of Armenia, Prime Minister Nikol Pashinyan's speech at the presentation of the Government Action Plan at the National Assembly, 2021, տես՝ <https://www.primeminister.am/en/statements-and-messages/item/2021/08/24/Nikol-Pashinyan-Speech/> (հարցվել է 19.9.2023):
- United Nations DESA Population Division, World Population Prospects 2022. Armenia: Total Population, 2022, տես՝ <https://population.un.org/wpp/Graphs/Probabilistic/POP/TOT/51> (հարցվել է 19.9.2023):
- United Nations DESA Population Division, World Population Prospects 2022. Azerbaijan, 2022, տես՝ <https://population.un.org/wpp/Graphs/Probabilistic/POP/TOT/31> (հարցվել է 19.9.2023):
- United Nations DESA Population Division, World Population Prospects 2022. Georgia, 2022, տես՝ <https://population.un.org/wpp/Graphs/Probabilistic/POP/TOT/268> (հարցվել է 19.9.2023):
- РИА Новости, Алиев заявил, что карабахский конфликт решен, 2021, տես՝ <https://ria.ru/20210625/aliev-1738612289.html> (հարցվել է 19.9.2023):

Հեղինակ

Հարություն Գրիգորյան

միջազգային և պետական իրավունքի մագիստրոս, Արցախի եվրոպական կենտրոնի ՀԿ-ի նախագահ և անկախ փորձագետ, Բեռլին, Գերմանիա, info@grigoryan.info

Open Access

This paper is published under the Creative Commons Attribution-ShareAlike 4.0 International license (CC BY-SA 4.0). Please note that individual, appropriately marked parts of the paper may be excluded from the license mentioned or may be subject to other copyright conditions. If such third party material is not under the Creative Commons license, any copying, editing or public reproduction is only permitted with the prior consent of the respective copyright owner or on the basis of relevant legal authorization regulations.